ուր եգիտ զգուսանս՝ կալեալ եդ ի Թէրսխանէ, ընդ որս եւ Ահմէտզօլի ոմն պետ նոցա ի փախուստ դարձեալ և զընկերս եդ ի Թէրսխանէ ընդ զերիսն որ զործէին ի ճամին։ Արար և զթուխունն եասաղ և յամենայն տեղիս բարձին։

Պատրիկն Երուսաղէմի Ցունաց եկն ի ԺԹ Հոկտեմբերի. յետ երից աւուրց գնացաք Զէլէպիւն (Ալրօ) առ նա։

Եւ ի ԻԴ ամսոյն բերին զգլուխ Մուրթազայ փաշայի և ընդ նմա եղելոցն՝ Մէհէմէտ փաշայի և Սիվրի պօլուկպաշոյ եւ Զաթալպաշ կոչեցեալ ումեմն փաշայի և իւր քէհեայի, զորս կալեալ Մէհէմէտ փաշայ տէրն Ամթայ, որ հնարիւք և ջանիւք որսայր ի ձեռացն Քուրթից, յորս անկեալ էր Մուրթազայ, և սայլիւրով զօրօք և մեծամեծօք և այլ փաշայիւք, զորս յաստուստ կարգեցին՝ ի վերայ նորա երթալ և ըմբռնել։ Եւ խոստացան քուրթին դանձս, մանաւանդ եթէ տացէ զնա ի ձեռս իւրեանց, եթէ ոչ՝ թագաւոր ի վերայ իւր յարիցէ ի պատերազմ. զոր և կալան և հասին ըղձանաց իւրեանց։ Եւ յաւուր գալստեան բերողացն գլխոց եւ թագաւորն ի նամազ ալայիւք, յորում աւուրս (յաջորդներքն կը պակսին)։

...(*) Եւ զՈւսկիւտարն Ե եկեղեցոյն եամախ, որ էր յառաջ Սուրբ Սարգսոյ՝ ի ժամանակ կաթողիկոսին Փիլիպպոսի արարեալ, բայց այժմ ետուն զայն և կէս

(*) Գրութեան ձեւի եւ թուղթի տեսակի տարբերութենէն յայտնի է թէ այս հատուածը ինկած է իր տեղէն եւ նախընթաց տարիներէն մէկուն կը պատկանի, բայց կարելի չըլլալով ժամանակագրական կարգը նրոդել՝ այստեղ կը դնենք։ Ծ. Հ.